Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.09.2021թ. թիվ 2113399953 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<29>>09 2021թ. 7-13- 14717 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Դավիթ Հովակիմյանի ՄԴ/78675-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի 100 շենքի 51 բնակարանի բնակիչ Դավիթ Հովակիմյանը դիմումով բողոքարկել է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.09.2021թ. թիվ 2113399953 որոշումը՝ նշելով, որ պարբերաբար նույն դիրքով կանգնել է նշված վայրում, բայց երբեք չի տուգանվել:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.09.2021թ. թիվ 2113399953 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի (երթևեկելի մասի տեղային լայնացում), որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր: Առանց կողային կցորդի երկանիվ տրանսպորտային միջոցները թույլատրվում է կանգնեցնել երկու շարքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով

երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.09.2021թ. թիվ 2113399953 որոշմամբ արձանագրված իրավախախտման տեսանյութը փաստում է, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը 26.08.2021թ. ժամը 21:50:58-րդ վայրկյանից ժամը 21:52:15-րդ վայրկյանը՝ 77 վայրկյան տևողությամբ կանգառ է կատարել Երևան քաղաքի Հ.Քոչար – Վաղարշյան փողոցների խաչմերուկի հատվածում երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.09.2021թ. թիվ 2113399953 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Դավիթ Հովակիմյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Ա.Մարգարյան
Հեռ. 060838402